

ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿՈՒՆ

ՏԵՍԱԿԱՆ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԻՒՆ

386. ՀԱՅ ՄԱՆԿԱՆ ԿՆԳԱՀԱՅՐԸ ՀԱՅՍՏԱՆԻԱՆ ՊԵՏԻ Ե ԸԼԼԱՅ. — Որովհետև կնքանայրը ամեն պարագայի մէջ երաշխաւորը, խնամակալը և վկան է երեսային հաւատքին, այս պատճառաւ կնքանոր անձին վրայ կը պահանջուին այն պայմանները, որոնք կրնան արգարտացնել գործը ստանձնելու պահանջները: Ամենէն առաջ ինքը պէտք է ունենայ երեսային դաւանութիւնը հաւատքը, որովհետև երաշխաւորը և վկայ է երեսային հաւատքին: Այս պատճառաւ հետք չէ անհաւատները, հեթանոսները և ուղիղ քրիստոնէները կնքանայրը կնքելու: Այդ բոնք բացայայտ կ'աւանդէ Տաթևացին (էջ 591): Նոյնը պէտք է ըսել հերետիկոսաց համար ևս, որոնց հաւատքը բոլորովին օտար է, ինչպէս նաև ոչ ուղիղափառներուն համար, որոնք թէև միացեալ են մեղի հետ երեք ժողովներու դաւանութեամբ, բայց կը դատուին մենէ վերաբարդուած յաւելուածներով, ինչպէս Յունադաւանները և Հռոմէականները եւն., շատեր կը կարծեն թէ թերութիւն մը եղած չ'ըլլար եթէ զանոնք կնքանայրութեան ընդունինք, որովհետև կրնան հաստատել Բանին մարդկայութեան և Սուրբ Երրորդական վարդապետութիւնը: Բայց քանի որ մեր եկեղեցիին մէջ մկրտուողները Հայաստանեայց մեր ուղղափառ եկեղեցին պիտի որդեգրեն, զոր չեն ընդունիր և չեն դաւանիր այնպիսի կրնքանայրերը, հոգեւորական իշխանութեան հրահանգները խստիւ կը պատահեն որ մեր ուղղափառ եկեղեցիին հաւատացեալները միայն ընդունուին կնքանայրութեան մէջ:

387. ՄԵՐ ՄԷՋ ԿՆԳԱՀԱՅՐԸ ԸՆԴՈՒՆԵԼ ԻՅԵ, ԻՍԿ ՄԱՆՈՒԿ ԿՆԳԱՀԱՅՐՈՒԹԻՒՆԸ ԶԵՆՍՈՒՄԷ. — Բայց մենք սովորութիւն չունենք, մանաւանդ թէ յայտնի արգելք կայ, որ մեր հաւատացեալներէն կրնար

ընդունինք այդ պաշտօնին: Չայդ կը գրէ նաև Տաթևացին (էջ 591), թէ և յառաջ բերած փաստերը վարդապետական մեծ արժէք մը չունին և սովորյալ կրնան նկատուիլ իրեն օրինակաւ փաստ: Եւստակոս եկեղեցին անխտիր կ'ընդունի կնքանայրու կնքանայր, ու այս վերջինը կը նախագահէ նոյնիսկ իգական մանուկներու համար: Իսկ Հատինները կնքանոր հետ կնքանայրն ալ կ'ընդունին, այսինքն կնքանոր կինը կամ քոյրը, ուստի և Հայ Հռոմէականներն կնքամօր կողմէ և պատիւ կը պահեն ընտանեկան շրջանակներուն մէջ: Ու կ'երեւի թէ մերինն խնայողայն սովորութիւնը իր արմատը ունի հնագոյն և ընդհանրագոյն այն բարքին մէջ, որով արեւելեայց մէջ կ'ինքը շատ չէին երեւնար:

Իսկ մանուկներուն և աղաքներուն կնքանայր կանգնելը զեղծում է պարզապէս, որովհետև ինչպէս երեսային հաւատքին երաշխաւոր, վկայ և փոխանորդ կրնայ լինել մէկը, որ ինքն ալ պէտք ունի իրեն համար երաշխաւորի: Ուստի գոնէ արքունքի հասած և իրենց հաւատքին գիտակցութիւնը ունեցող պատանիները պէտք է կոչել կնքանայրութեան: Ի վերջոյ արեւմտեաններուն և առհասարակ կուսակոթններուն ալ ներքի չէ կնքանայրութեան պաշտօնը, և այս մանաւանդ ընտանեկան խնամակալութեան պատճառաւ, զոր կնքանայրերը պարտականութիւն կը նկատեն իրենց համար իրենց սաներուն վրայ, երբ անոնք իրենց ծնողքը կորսնցնեն, ինչպէս նաև ընտանեկան յարաբերութեանց համար սանահայրերուն և սանամայրերուն հետ:

388. ՀՈՐԵՆԻՍՐ ԱԶԳԱՅՈՒՆԻԹԻՒՆ՝ ԿՆԳԱՀԱՅՐՈՒԹԻՒՆ — Կնքանայրութեան կը ծնի հոգեւոր ազգականութիւն, որ մարմնաւորին պէս խափանիչ կ'ըլլայ մերձաւոր ամուսնութեան, բայց այս մասին կը խօսինք երբ կարգը գայ պատկին: Հատինները հոգեւոր ազգականութիւն կ'ընդունին ոչ միայն կնքանայրերուն և սաներուն, այլ նաև անոնց մերձաւորներուն, մանաւանդ աւելի ևս տիրապէս կնքանոր և կնքակալին մէջ, այսինքն մկրտուչ

քահանային և մկրտուող երեսային միջև։ Ու ասիկո թերեւս ոչ ի գուր, զի եթէ մարմնաւոր ծնունդին պէս կազմուեցաւ հոգեւոր ծնունդն ալ, ապա ուրեմն աւազանէն ծնողին հոգեւոր ծնողն է մկրտիչը և ոչ թէ կնքահայրը։ Սակայն մեր գրքերուն մէջ ոչ մէկ անկտրկ կայ այդ մասին, և հոգեւոր ազդականութեան հարցին մէջ կը յիշուին միայն կնքահայրերը և իրենց մերձաւորները ու ոչ երբեք մկրտաւորները և իրենց մերձաւորները։ Գուցէ մասնաւոր քահանայից դրուած թիւերը և գիւղերու մէջ քահանայից քիչութիւնը բռնադատեց մտադրութիւն չգործնել մկրտաւորներուն ազդականութեան, որպէս զի գիւղական քահանաները անհնարութեան չհանդիպին իրենց զաւակներուն ամուսինները գտնելու համար։

389. ԵՐԵՒԱՅԻՆ ՀՐԱԺԱՐՄՈՒՆԻՔԸ. — Կնքահօր մասին խօսեցանք մկրտութեան Մաշտոցին մէջ յիշատակուած ըլլալուն համար միայն, որովհետեւ արարողութեան կարգը գեւե երեսային օրհնութեան մէջ է։ Նորահաւատը, որ երեսայութեան մէջ կը մանէ, պէտք է մերժէ, լքէ նախկին անհուատութիւնը և անկից յառաջ եկած յարաբերութիւնները չարին իշխանութեան հետ ու այս է հրաժարեցմունքը կամ հրաժարիմքը։ Մեր Մաշտոցներուն այժմեան ձևը կը պատուիրէ Հրաժարիմքը երեսը արեւմուտք գործած, իսկ Հաւատամքը՝ դէպի արեւելք։ Բայց ուրիշ ազգերու ծիսարանները Հրաժարիմքը և Հաւատամքը կը կատարեն մկրտիչին և ընդունողին միջև հարցումով և պատասխանով միայն։

Ու Օձնեցիին կը մեղադրէ իր ժամանակի պաշտօնեաները չզի ոմանք չհրաժարելոյն ի սատանայէ նոցա հարցմամբ ի վերայ ոչ բերին զերգմունս և ոչ ըզարտոյ երրորդութեանն խոստովանութիւնն (էջ 8)։ Եւ ասոր համար է 1840 թուականին վեներտիկ տպուած Մաշտոցը, ըստ վաղեմի ընտիր և երկաթագիր օրինակի, ինչպէս կ'ըսուէր յառաջարանին մէջ, թէպէտ և հրատարակիչները իրենց համար կ'ըսեն թէ օրինակին մէջ յաւելուածները ըրած են, որուն համար երկուս

անքի տակ կը մնայ թէ ո՞րն է բուն սկզբնագիր մասը և ո՞րը յաւելուածը։ Արդ, այդ օրինակին մէջ ալ հարցումով և պատասխանով ապաւանտ են չրաժարելուն և հաւատարմուն յայտարարութիւնները, սովորական օրինակներու միահետ խօսքերէն վերջ։

390. ԵՐԵՒԱՅԻՆ ԵՐԵՍԱՅԻՆ ՕՒՄՈՒՄԸ. — Ի լրումն երեսային օրհնութեան, կը կատարուէր անոր օծումը, երեսայից պարզ իւղով, որ հիմա դադարած է մեր եկեղեցիներուն մէջ, բայց անբերական ի է որ անկա կար հին ատենները։ Ասոր կը վկայէ Օձնեցիին, որ կը վկայէ թէ երեսային օծումը հրաւիրական բնոյթ ունի ու յանդիմանելով յետոյ զանոնք, որ եւ յերեսայութեան մատուցանեն ձեռնադրութեամբ յօծումն, այլ միայն մկրտութիւնն աւազանին վաղվաղէն ի ներքս անկանին (էջ 8), ու կանոնին մէջ ալ կը պատուիրէ թէ չպարտաւ արժան է զերեսայից զձեռնադրութիւն և զօծումն և զխոստովանելն առ դրանն մկրտութեան կատարել և ապա տանել ի ներքս ուր աւազանն է և մկրտել (էջ 27)։ Երեսայից իւղին խափանումը յառաջ եկած է երեսայութեան վիճակին խափանումէն։ Որովհետեւ նորածին երեսաները նոյն ատեն կ'ընդունին երեսայութիւնը, մկրտութիւնը և դրոշմը, և մկրտութեան ետեւէն կու գայ դրոշմի օծումը, ասոր համար աւելորդ թուեցաւ երեսայութեան նախընթաց օծումը։ Թէն Օձնեցի իր մասնակին մէջ լանոց տալով խափանումը, որ սկսած էր սովորական դառնալ, բայց յաղթեց սովորութիւնը և վերջին ժամանակներու Մաշտոցներէն ինկաւ անոր յիշատակութիւնն անգամ։

391. ԵՐԵՒԱՅԻՆ ՕՍՈՒՄԻՆ. ՀԵՏՔԻՐԸ ԿԱՆ ՄԱՇՏՈՑԻՆ ՄԷՋ. — Բայց օծումին հետքը բոլորովին չէ կորսուած։ Երեսայութեան մեծ աղօթքին մէջ, ուր այսօր կը կարդանք. «Եւ այժմ աղաչեմք զքեզ, Տէր բարերար, առաքեալ զնորհաւորութեամբ Հոգւոյդ, զի որ օծցի արարւոյս իւղովն եղիցի ի նմա ի սրբութիւն հոգեւոր իմաստութեանն» (էջ 12)։ Վեներտիկան

օրինակը ունի. «Եւ այժմ աղաչեմք զքեզ, Տէր բարերար, առաքեա՛լ զչնորհա Հոգւոյդ Սրբոյ յիւղս այս, զի որ օծցի սուրբաւ, եղիցի նման եւայլն» (էջ 18): Նսեա Ստրկուադին այժմեան քարոզը որ կ'ըսէ «Վասն իջանկւոյ շնորհաց Հոգւոյն Սրբոյ ի ձեռն իւղոյն այսօրիկն: Իսկ վննեփկեանը ունի. «Վասն իջանկւոյ յիւղս այս շնորհաց ամենազօր Հոգւոյն Սրբոյ»: Այս խօսքերը ուրիշ բան չեն կրնար ըլլալ, եթէ ոչ ակնտրկութիւն միայն երկխոյնից իւղին, որուն համար կանոնները կ'ըսեն թէ պէտք է օրհնել զայն իւրաքանչիւր անգամի համար և սպառել: Թէև աղօթքին տեղը շփոթուած կ'երևի, որովհետեւ վննեփկեան օրինակը սա խորագիրը ունի. «Եւ եղիցի պատրաստ ձէթն երկխոյնից և թաղար զբոյն ի սուրբ ձէթն և առնէ ի Խորան խաչ և ի թիկնաւձէջսն, ի նշան մրցութեան ընդդէմ թըշնամւոյն և առէ. Օծանկէմ զքեզ, եայլն» (էջ 17): Ուրիշ աղգեբուն մէջ ալ տապէս կուրծքին և թիկնամէջին վրայ կը կատարուի երկխոյնութեան օծումը: Իսկ երկխոյնից ձէթին պատրաստութեան և կիրառութեան մասին բացայայտ է Օծանցիին կանոնը. «Պարտ և արժան է զմկերութեան ձէթն քանոնային օրհնել մի ըստ միջէ ընդ մկերելն, ըստ բաւականի փառուն պիտոյից և նայանկէն սոսմկերտալս մերձեցուցանելով զօրհնալն սպառել, և մի իշխել միւսանգամ օրհնելովն բազում անգամ օրհնել և միայն օծանել նոյն զերկխոյնից և զմկերտալսն ընդ մկերտին յաւազանին և յայլ խորհուրդ օծման մի իշխուցէ մատուցանել զնա» (էջ 26): Լատինները և անոնց հետեւողները Հռովմէական Լատին ամէն տարի կը պատրաստեն երկխոյնից իւղը, Աւագ Հիւրզարթի օրը, եպիսկոպոսի օրհնութեամբ:

392. ԿՈՐԻՆՏՈՐԵՆԻԹԵԱՆ ԶՐՈՅ ՄԿԼՐՏՈՒԹԵԱՆ. — Երկխոյնից օրհնութեան վերջ կու գայ կարգը Զուրին օրհնութեան, սուրբ մասնեքով, երգերով, ընթերցումներով, աղօթքներով. Միւսունի հեղուսով և տեսանագրութեամբ, Աստուածայայտութեան և Զորհնեաց մեծ կանոնին համաձայն և Արգ,

այս կարգը օր ծիսական է, խորհուրդին համար պէտք եղած ջուրը նուիրագործելու համար, հական չէ իբրև խորհուրդին մաս: Այս պատճառաւ այն եկեղեցիներուն մէջ որոնց ժողովուրդը չափ է և մկերութեանները յաճախ կը կատարուին, անգամ մը օրհնուած ջուրը կը պահուի յատուկ մկրտութեան համար ևս, և ջուրին օրհնութեան կարգը նորէն չի կատարուի:

393. ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ՄԵՆՈՐ. — Արարողութեան բուն մասն է մկրտութիւնը, Խոր մկրտիչը երկխոյն տալանին մէջ կ'իջեցնէ, անոր կը մօտեցնէ նիւթը և կ'արտասանէ ձեռք և կը կատարէ խորհուրդը: Նիւթին և ձեռն մասին խօսած ատենին, ըստանկերուն վրայ օշինչ ունինք տեղեցնելիք: Կարճ աղօթք մը ակիդրէն և կարճ Աւատարանի ընթերցում մը վերջէն, կը լրացնեն արարողութիւնը, այնպէս որ իմէ երկխոյնութեան և Զուրին օրհնութեանները վերջնէն, մկրտութեան բուն ծէսը համառօտ բուն մը կը մնայ: Վննեփկեան քաղաքութեան հին ձեռն մէջ սաղմոս մը և աղօթք մըն ալ կը գտնուին վերջը, զորս չունին այժմեան առանձն տեսակները: Առհասարակ խօսելով, այսպէս մանր տարբերութիւններ կը գտնուին յաճախ զրաւիք ծիսականներուն մէջ ու և արդիւնք են համառօտութեան և դիւրութեան ջանից, արանց ճիմա ալ կը հեռանին խորհուրդներուն պաշտօնականները:

394. ԱՒԻՋԱՆԻՆ ՆԻԻԹԸ ՆԻ ՏՆՈՐԸ ԸՍՏ ԿԱՆՈՆԻ. — Աւագանին համար, օրուն մէջ մկրտութիւնը պիտի կատարուի, Օծանցիին կանոնը այսպէս կը գրէ. «Ոչ է պարտ զաւագանին յայլ իմեքէ նիւթայ պատրաստել և կամ երանօր կամեցի, այլ տալան քարեղէն հաստատել ի նմին իսկ յեկեղեցւոյ և կամ անդէն մերձ յեկեղեցին ի մկրտատուն» (էջ 26): Այստեղեցիին կանոնը կ'ըսէ. «Կանգնեցի յեկեղեցւոյ կամ ի տանն պաշտամանն իմ՝ քարեղէն իմ՝ զինչ և իցէ երկեղածուքներով, արժանի և քաւականութեամբ գործոյն, զաւագորութեամբ, լայնութեամբ և

խորուժեամբ, զի բաւականչափ ծածկեացէ Զուրն զհասակ մանկանն որ մկըրտիցենն (Ներ. ԺԵ. 128), Նիւթն քարէ տարբեր ըլլալը անշուշտ հարկը ունի ի նկատի, առանց սակայն հաստատութեան հանգամանքը մտնալու: Իսկ կանոնին ըստ՝ չափին գալով, պէտք է զայն յիշել նորոգեալ աւազաններէն շատերուն առթիւ, որոնք չունին ոչ օրինադրեալ մեծութիւնը և ոչ ալ խորութիւնը:

395. ԱՒԱԶԱՆԻՆ ՏԵՂԸ ԵՒ ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ՎԱՅՐԸ. — Եկեղեցւոյ մէջ հաստատուն աւազան գտնուիլը պարտաւորիչ է ի հարկէ իրաց, սովորական կարգին համեմատ, ապա թէ ոչ երբ անհրաժեշտ ըլլայ, կարելի է մկրտել որեւէ տեղ և որեւէ անօթի մէջ, բաւական է որ անոնց մէջ անպատշաճութեան հանգամանքը չըլլայ: Այդ մասին բացայայտ է Մակարեան կանոնը. «Ապա եթէ դիպեցի որ ուր ոչ է եկեղեցի և կարգաւոր աւազան, չէ արժանաւորեալ որ կամորձին մկրտել, այլ կատարել զմկրտութիւնն առանց կարգաւոր աւազանի, վասն ի հարկէ պիտոյիցն է, զի մի գտնէ պարտական փրկութեան, խափանելով զմկրտութիւնն» (Մկր. Բ., Թղ. 80): Այս մտաւոր է որ կ'աւելցնէ Աշտարակեցիին կանոնը. «Եւ ի տունն չինականացն քահանային մկրտութիւն մի իշխեսցեն առնել բայց վասն երկրաւոր մահուանն թէ վատեղ ինչ իցէ» (Ներ. ԺԵ. 128): Կանոնական վերջին քաղաւանքները, որոնք Շնորհալիին անունով են, հետեւել հրահանգներն ալ կ'աւելցնեն պարագայից հարկին առջև. «Եթէ եկեղեցի ոչ լինի և երեսան ի մեռանել է, պարտ է աւազան օրհնել յոր ինչ և իցէ նիւթոյ վասն հարկին և մկրտել և եթէ հաղորդ լինի առնան հաղորդել, և անօթն թէ այլ ոչ է պիտոյ, թողեացի ի սուրբ և անքոյթ տեղով և ջուրն մի լիցի կոխուէն և ոչ օրհնեալ անօթն այլ ինչ գործ և միտ առանց օրհնելու աւազանն մկրտել ի վայրապար ամանի, բայց թէ հարկն օտիպէ, մկրտեացէ, բայց զանօթն յայլ գործ մի անցուցէ» (Շնոր. Թղ. 274):

396. ԿԻՆԵՐԸ ՁԵՆ ԿՐՆՈՐ ՄԱՍՆԱԿՑԻԼ ՄԿՐՏՈՒԹԵԱՆ. — Մկրտութիւնը պաշտելու համար Ներսէս Բագրեւանդաւոյն կանոնը կ'օրինադրէ. «Մկրտութիւնն մի ոք ծաւլութեամբ իշխեսցէ առնել, որպէս լսեմք, այլ երկիւղիւ և զգուշութեամբ, բուրվառօք և ճրագօք, և առաջատեսաւ վարտագործօք, որպէս վայել է սրբոյ աւազանին» (Ներ., նոյն): Այդ կը ցուցնէ թէ մկրտութեան պաշտամունքին առնել պէտք է գործածել եկեղեցական զարգեր և սպասաներ, ինչպէս ամէն Խորհուրդի ատեն: Այժմ ևս սովորութիւն է որ մկրտիչ քատանները զգեստաւորուին ինչպէս պատարագի ատեն, բայց բուրվառակի որսրկաւագ և մոմակալ դպիր միշտ չեն գտնուիր, և հարկ է որ քահանաները իրենք մինակ չկատարեն Խորհուրդը, առանց մէկուն սպասաւորութեան:

Ընդհանուր սովորութիւն է և կարգ մը Մաշտոցներու մէջ գրուած է խորագիրներուն մէջ թէ կիները պէտք չէ մօտենան աւազանին: Այդ խօսքին միտքը անշուշտ ոչ թէ պղծութենէ զգուշանալու համար է, այլ թէ պատշաճ չէ պարզապէս կրնորուն մօտնակցիլը սեղանին և Խորհուրդներուն ծառայութեան: Այս մտաւոր է նաև Աշտարակեցիին կանոնը. «Եւ կանայք առ քահանայ մի իշխեսցեն կալ, բայց սարկաւագունքն սպասաւորեցեն, և կանայք իւրեանց տեղիս աղօթիցեն, և մի իշխեսցեն գործակիցք քահանայիցն, որպէս լսեմք, լինիով որպէս զսարկաւագունք» (Նե. ԺՁ. Թղ. 128): Կը կարգանք հին գիրքերուն մէջ, թէ երբեմն սարկաւագունքին երեսուն պաշտօնն է կին երեսաներուն սորվեցնելը և զանոնք մօտեցնելը և քրիստոնէական կեանքի մէջ մտցնելը: Սակայն այդ ամէնը պէտք է հասկնալ խորհրդական պաշտամունքէն արտաքին եղած պարագաներու համար: Շատ բացայայտ են Սահակեան կանոնները. «Կանայք ի ժամ մկրտութեան մերձ առ քահանայ մի իշխեսցեն կալ, որպէս սովորեցան ամանք առնել յանդիմութեամբ և մկրտիլ ընդ նոսա, այլ ի տեղով իւրեանց աղօթեցան» (Սահ. ԺՁ. Թղ. 172):